

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ և ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՄԵԿ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿ ՈՒՐԻՇՇՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ**

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

Սույն կանոնակարգի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության <<Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 16-ի N938-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> 2011 թվականի օգոստոսի 25-ի N240-ն որոշումը.

I Հիմնական դրույթներ

10. Սույն կանոնակարգը տարածվում է բակալավրատուրայում, մագիստրատուրայում և հետբուհական ծրագրերով սովորողների վրա, անկախ ուսուցման ձևից (առկա, հեռակա հեռավար) և մասնագիտություններից:
11. Ակադեմիական շարժունությունն ուսանողների, հետազոտողների ուսումը կամ որակավորումը բարձրացնելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում սովորողի կրթության շարունակումն է:
12. Ըստ ուսման նպատակի, կամ ժամանակահատվածի, բակալավրի մագիստրոսի և հետազոտողի (հետբուհական) կրթական ծրագրերով սովորողների ակադեմիական շարժունությունը կարող է լինել որոշակի ժամկետով (այսուհետև շարժունություն) կամ հիմնական (այսուհետև տեղափոխությունը):

II Սովորողների ակադեմիական շարժունությունը

13. Սովորողների շարժունությունը չի հանգեցնում ուսման սահմանված ժամկետի ավելացմանը, եթե այն իրականացվել է սույն կանոնակարգին համաձայն:
14. Սովորողների շարժունության իրականացման եղանակներից է գործընկեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև, սովորողի անհատական

նախաձեռնությամբ, նրանց այլ ուսումնական հաստատություն ուղարկելը, կամ այլ ուսումնական հաստատությունից ՀԱԱՀ ուղարկելը հետևյալ նպատակով.

14.1. Կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի շրջանակներում (երկու ավարտական փաստաթուղթ ստանալու) ուսանելու,

14.2. Համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ վկայական ստանալու) ուսանելու.

14.3. Միջբուհական համագործակցության այդ թվում ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելու.

14.4. Վերապատրաստում (այդ թվում լեզվական) անցնելու.

14.5. Ուսումնական արտադրական, հետազոտական պրակտիկա անցնելու:

15. Շարժունությանը մասնակցող հավակնողների ընտրությունը կատարվում է մրցութային եղանակով՝ հաշվի առնելով նաև նրանց ակադեմիական առաջադիմությունը և ընդունող լեզվի (կամ օտար լեզվի) իմացությունը:

16. Շարժունության ծագրին մասնակցելու նպատակով կնքվում է եռակողմ կրթական համաձայնագիր սովորողի և ուղարկող ու ընդունող ուսումնական հաստատությունների միջև: Համաձայնագրում նշվում են այն առարկաները, որոնք սովորողները պետք է ուսումնասիրեն ընդունող ուսումնական հաստատությունում: Միաժամանակ նշվում են շարժունության արդյունքում առաջացած ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները:

17. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի ծրագրի 30 տոկոսը:

18. Ընդունող բուհում ուսուցման ժամկետի ավարտից հետո սովորողն իր ուսումնասիրած առարկաների և պարապունքների ցանկը, ստացած կրեդիտները և գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի ՀԱԱՀ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար: